

յոյժ սիրելի եղբայրակցին՝ Հայոց թագաւորին՝ — եւ կամ իր հաստատ հրամանին — սաք եւ յանձնէք ամսէ ամիս հինգհարիւր ֆրանկ ոսկի , ամբողջ տարի մը , որ այս տարւան համար կընէ վեցհարիւր ֆրանկ , սկսելով վերջին յունուարի առաջին օրէն մինչեւ յառաջիկայ գեկտեմբերի վերջին օրը : Այս գումարն ստանալ այն ձեւակերպութիւնով որ իրեն պատուիրեցինք անցած տարի , եւ ներկայ գրութիւնս միացնել մեր յիշեալ եղբայրակցին անդորրագրին հետ : Ամէն ինչ որ պարզեւուած եւ յայտարարուած է՝ անոր պիտի տրուի : Կուզենք որ առանց ո՛ր եւ է առարկութեան տրուի եւ վճարուի , եւ յիշեալ ընդհանուր հարկահաւաքին հասոյթէն զեղջուի [նոյն գումարը] Պարիսի մէջ մեր հաշուասենեկի հաւատարիմ եւ սիրելի անձերու կողմէ , առանց միա զնելու ասոր հակասող հրովարտականքու , հրամաններու եւ արգելքներու : Տուեալ ի Պարիս , 4-րդ օրն յունիսի , շնորհաց թուին 1390 , եւ մեր թագաւորութեան տասներորդ տարին :

Թագաւորին կողմէ՝ իր ժողովին մէջ՝  
ՄՈՆՏՄԱՐԻՆ

Երկամետայ անդորրագիր Լեւոնի (1)

Լեւոն , շնորհիւն Աստուծոյ , բազաւոր Հայոց : Ամէն անոնք որ ներկայ գտարինս պիտի տեսնեն՝ զիսման , որ պատերազմական նպաստներու ընդհանուր հարկահաւաք Յակոբ Հեմոնէ ստացան վերջին փետրուար ու մարտ ամիսներու համար հազար ճրանկ ոսկի , այն պատճառով որ պերճաւոր բազաւոր պատուիրեց մեզ ամէն ամիս հինգհարիւր ճրանկ ստանալ իմէ , ամբողջ տարի մը , սկսելով վերջին յունուարի առաջի օրէն մինչեւ յառաջիկայ գեկտեմբերի վերջին օրը , ինչպէս կը տեսնուի յիշեալ պերճաւոր բազաւորին կողմէ այս մասին տրուած հրամանագրէն , որ գրուած է Պարիսի մէջ , 1390 յունիս 4-ին : Յիշեալ հազար ճրանկ ոսկիէն շատ գոն եմ եւ ամբողջութեամբ ստացած . իսկ վերոյիշեալ պերճաւոր բազաւոր , յիշեալ հարկահաւաքն ու միւս բոլոր անձերն որոնց անդորրագիր տալ պէտք էր՝ պատճէ ազատ կը կացուցանեն : Ի վկայութիւն ասոր՝ ներկայ անդորրագրին վրայ մեր անձնական կնիքը դնել տուին : Տուեալ ի Պարիս , 14-րդ օրն յունիսի , շնորհաց թուին հազար երեքհարիւր իննսուն :

ԿՍՐԲԷԼ

(1) Բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ Document XXVIII.